«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարանի ռեկտոր

Ա.Վ.Գրիգորյան

«12» Մայիս 2026

ԿԱՐԾԻՔ
ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Սեբբագգալա Տոննի Մայամբալայի Ը.00.02-«Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «Ռուսաստանի դաշնությունում գիտական հետազոտությունների և նորարարությունների շուկաների զարգացման ինստիտուցիոնալ միջավայրի գնահատում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը քննարկվել է ՀՊՏՀ Կիրառական տնտեսագիտության ամբիոնի 2026թ-ի ապրիլի 28-ին կայացած թիվ 12 նիստում: Նիստին ներկա էին՝ ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր Թ.Մ.Մկրտչյանը (նախագահող), տ.գ.թ., դոցենտներ՝ Ս.Վ.Խաչիկյանը, Կ.Հ.Գրիգորյանը, Ռ.Ս.Ղանթարչյանը, Ք.Ջ.Վարդանյանը, Գ.Ա.Ավագյանը, Ա.Գ.Հակոբյանը, Ֆ.Ֆ.Բահարյանը, Ա.Ժ.Առաքելյանը, Ա.Ս.Սարգսյանը, Մ.Մ.Մինասյանը, տ.գ.թ., ավագ դասախոսներ՝ Վ.Ի.Տիգրանյանը, Գ.Ս.Խաչատրյանը, Ն.Ն.Կարապետյանը, տ.գ.թ. դասախոսներ՝ Դ.Ս.Գևորգյանը, Ա.Ա.Մարգարյանը, դասախոս՝ Մ.Ա.Ղարագյոզյանը, Ն.Բ.Պետրոսյանը, Ա.Ա.Միրումյանը, ամբիոնի ավագ լաբորանտ Ս.Հ.Սուքիասյանը:

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Այսօրվա աշխարհաքաղաքական անորոշություններն ու սրված ռազմական լարվածություններն առավելապես մեծ ազդեցություն ունեն ՌԴ տնտեսության վրա, քանի որ ուղեկցվում են արտաքին պատժամիջոցներով և արևմտյան տեխնոլոգիաների սահմանափակ հասանելիությամբ: Այս պայմաններում Ռուսաստանի համար կենսական

նշանակություն է ձեռք բերում սեփական գիտական և նորարարական ներուժի զարգացումը: Ինստիտուցիոնալ միջավայրի գնահատումը թույլ է տալիս հասկանալ՝ որքանով են գործող օրենսդրական և կառուցվածքային մեխանիզմները նպաստում ներմուծման արագացված փոխարինմանը: ՌԴ տնտեսությանը բնորոշ խզումը գիտական մշակումների և դրանց առևտրայնացման միջև կարևոր է դարձնում հետազոտել և վերլուծել, թե ինչու երկրում առկա գիտական հետազոտությունների և նորարարությունների շուկաների զարգացման ինստիտուցիոնալ միջավայրի բաղադրիչները միշտ չէ, որ արդյունավետ են գործում: Գիտական դրամաշնորհների հաշվետվողականության բարդ համակարգը, մտավոր սեփականության պաշտպանության մեխանիզմների թերությունները, պետություն-գիտություն-բիզնես դեռևս թույլ կապը խոչընդոտում են գիտական հետազոտությունների և նորարարությունների շուկաների օպտիմալ զարգացմանը:

ՌԴ տնտեսական անվտանգության և մրցունակության ապահովման անհրաժեշտության, գիտության ոլորտում մասնավոր ներդրումների ներգրավման խթանման, գիտահենք տնտեսության անցման, ինստիտուցիոնալ միջավայրի արմատական բարելավման խնդիրների ուսումնասիրման կարևորությունը պայմանավորում է հետազոտության ուղղվածության արդիականությունը:

Հետազոտության նպատակները և խնդիրները

Ներկայացված ատենախոսությունում որպես նպատակ ձևակերպված է՝ գիտական հետազոտությունների և նորարարությունների շուկաների ինստիտուցիոնալ միջավայրի միջռեգիոնալ տարբերությունների և դրանք պայմանավորող գործոնների բացահայտումն ու քանակական գնահատումը՝ նորարարական զարգացման դինամիկայի վերլուծության միջոցով, ինչպես նաև՝ ՌԴ-ում գիտական հետազոտությունների և նորարարությունների շուկաների զարգացմանն արդյունավետ ինստիտուցիոնալ միջավայրի ստեղծմանն ուղղված տեսական և կիրառական դրույքների մշակումը:

Սահմանված նպատակային հասնելու համարհեղինակն առանձնացրել է հետևյալ խնդիրները.

- Համակարգել ինստիտուցիոնալ միջավայրի հետազոտության տեսական մոտեցումները, մշակել կոնցեպտուալ սխեմա, որը որոշում է ինստիտուցիոնալ

գործոնների ազդեցության ուղիները գիտական հետազոտությունների և նորարարությունների շուկաների գործառելու և զարգացման վրա:

- Ընդհանրացնել գիտական հետազոտությունների և նորարարությունների շուկաների ինստիտուցիոնալ կարգավորման պրակտիկ փորձը, իրականացնել նորարարական համակարգերի համեմատական վերլուծություն և բացահայտել ՌԴ տնտեսության պայմաններին բնորոշ մակրոտնտեսական տարրերը:
- Ձևավորել գիտական հետազոտությունների և նորարարությունների շուկաների ինստիտուցիոնալ միջավայրի քանակական գնահատման ցուցանիշների համակարգը:
- Դասակարգել ռեգիոնալ ինստիտուցիոնալ դիֆերենցման գործոնները և ռեգրեսիոն վերլուծության հիման վրա ներկայացնել յուրաքանչյուր գործոնի ազդեցության ուղղությունն ու չափը:
- Կլաստերների ռեսուրսային հնարավորությունների և ինստիտուցիոնալ սահմանափակումների բացահայտման հիման վրա մշակել գիտական հետազոտությունների և նորարարությունների շուկաների զարգացման ինստիտուցիոնալ կարգավորման մեխանիզմների կատարելագործման հանձնարարականներ:

Հետազոտության օբյեկտը և առարկան

Հետազոտության օբյեկտը Ռուսաստանի տարածաշրջանների ինստիտուցիոնալ միջավայրն է, որը ձևավորում է գիտական հետազոտությունների և նորարարական շուկաների զարգացման մակրոտնտեսական պայմանները:

Հետազոտության առարկան տնտեսական հարաբերություններն ու ինստիտուցիոնալ պարամետրերն են, որոնք որոշում են ներդրումային գործունեության և նորարարական կատարողականի տարածաշրջանային տարբերությունները, ներառյալ նաև գիտական և նորարարական գործունեության մասնակիցների միջև փոխազդեցության խոչընդոտներն ու խթանները:

Հիմնական գիտական արդյունքները և հետազոտության նորույթը

- Մշակվել է գիտական հետազոտությունների և նորարարությունների շուկաների ինստիտուցիոնալ միջավայրի հայեցակարգային շրջանակ, որը միավորում է ինստիտուցիոնալ-էվոլյուցիոն, տարածական և նորարարական մոտեցումները մեկ վերլուծական շրջանակի մեջ, որն էլ ներառում է այն ուղիները, որոնց միջոցով ինստիտուցիոնալ գործոնները ազդում են տարածաշրջանների նորարարական զարգացման և գիտական ու նորարարական գործունեության տարածական կազմակերպման վրա՝ տնտեսական կարգավորման համակարգում:
- Մշակվել է տարածաշրջանների ինստիտուցիոնալ միջավայրի համեմատական արդյունավետության քանակական գնահատման մոտեցում՝ ուղղված ինստիտուցիոնալ որակի և նորարարական կատարողականի միջև կայուն կապերի բացահայտմանը՝ տվյալների փաթեթի վերլուծության /DEA/ մեթոդի կիրառմամբ՝ 16 մուտքային և 3 ելքային ցուցանիշների համակարգով:
- Բացահայտվել և քանակականորեն հիմնավորվել է տարածաշրջանային ինստիտուցիոնալ տարբերակման գործոնների դասակարգումը, որը ներառում է հետազոտական և նոարական շուկաների զարգացման խթաններն ու խոչընդոտները, ինչպես նաև իրականացվել է Ռուսաստանի տարածաշրջանների խմբավորում ըստ ինստիտուցիոնալ արդյունավետության և նորարարական գործունեության պրոֆիլների:
- Մշակվել է տնտեսաչափական մոդել, Ռուսաստանի տարածաշրջանների նորարարական զարգացման վրա ինստիտուցիոնալ գործոնների ազդեցության որոշման համար, մշակվել է այդ գործոնների տիպաբանությունը՝ կլաստերային վերլուծության կիրառմամբ:
- Մշակվել են ինստիտուցիոնալ միջավայրի զարգացման կառավարման նորարարական և ներդրումային մեխանիզմներ, որոնք ուղղված են տարածաշրջանային նորարարական համակարգերի հավասարակշռության բարելավմանը և գիտական ներուժի ամրապնդմանը:

Հետազոտության ծավալը և կառուցվածքը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից: Ատենախսությունը շարադրված է 133 էջի վրա՝ առանց հավելվածների:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ատենախոսության ներածությունում հեղինակը հիմնավորել է թեմայի արդիականությունը, ձևակերպել է հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակը, խնդիրները, տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, գործնական նշանակությունը, ստացված հիմնական արդյունքները և գիտական նորույթները, աշխատանքի ծավալն ու կառուցվածքը:

Ատենախսության առաջին գլխում՝ <<Գիտական հետազոտությունների և նորարարությունների շուկաների զարգացման համար ինստիտուցիոնալ միջավայրի ձևավորման տեսական հիմքերը>> ուսումնասիրվում են այն տնտեսական պայմանները, որոնց ներքո գործում է ինստիտուցիոնալ միջավայրը և այն ուղիները, որոնց միջոցով հաստատությունները ազդում են տարածաշրջաններում հետազոտական և նորարարական շուկաների աշխատանքի և արդյունավետության վրա: Դիտարկվում են ներդրումային գործունեության, զարգացումների առևտրայնացման և տեխնոլոգիական լուծումների տարածման վրա ազդող խթաններն ու սահմանափակումները: Վերլուծվում են հետազոտական և նորարարական աջակցության հաստատությունների կազմակերպման մոտեցումները, ինչպես նաև արտադրության տեխնոլոգիական արդիականացման համար պայմաններ ստեղծելու գործելակերպը: Ձևակերպվել է ինստիտուցիոնալ պարամետրերի և նորարարական արդյունքաբերության ցուցանիշների միջև փոխհարաբերությունների սխեմա տարածաշրջանների և ազգային տնտեսության մակարդակներով, ներառյալ նաև թողարկման տեխնոլոգիական կառուցվածքը և շուկաներին հասանելիության արտաքին տնտեսական պայմանները:

Ատենախոսության երկրորդ գլխում՝ «Գիտական հետազոտությունների և նորարարության զարգացման ինստիտուցիոնալ միջավայրի ներկայիս վիճակը Ռուսաստանի Դաշնությունում», ուսումնասիրվում են ինստիտուցիոնալ միջավայրի

պարամետրերը և դրանց միջտարածաշրջանային տարբերակումը: Իրականացվել է Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների նորարարական կատարողականի՝ արդյունքաբերության վրա ազդող գործոնների ախտորոշումը, ներառյալ ինստիտուցիոնալ պայմանները, ներդրումային գործունեությունը, արդյունաբերական արտադրանքի տեխնոլոգիականությունը և արտաքին տնտեսական կողմնորոշումը: Վերլուծական ընթացակարգերը օգտագործվում են որպես միջտարածաշրջանային համեմատության և նորարարական զարգացման կայուն պրոֆիլների բացահայտման գործիք:

Ատենախոսության երրորդ գլխում՝ «Գիտական շուկաների զարգացման ինստիտուցիոնալ միջավայրը և ինստիտուցիոնալ միջավայրի բարելավումը: Ռուսաստանի Դաշնությունում հետազոտությունների և նորարարությունների կառավարման առաջարկվող մեխանիզմները», հեղինակը հիմնավորում է գիտական հետազոտությունների և նորարարությունների շուկաների զարգացման միտումները՝ ուղղված միջտարածաշրջանային անհավասարության նվազեցմանը և պետական աջակցության արդյունավետության բարձրացմանը: Ձևակերպվում են առաջարկություններ գիտական կազմակերպությունների, պետական մարմինների և տնտեսվարող սուբյեկտների միջև փոխգործակցության բարելավման համար՝ համաձայն տարածաշրջանային նորարարական քաղաքականության առաջնահերթությունների: Ատենախոսության այս հատվածում մշակվել է տարածաշրջանային ինստիտուցիոնալ միջավայրերի համեմատական արդյունավետության քանակական գնահատման մոտեցում: Այս մոտեցումը կենտրոնանում է ինստիտուցիոնալ որակի և նորարարական կատարողականի միջև կայուն կապերի բացահայտման վրա: Ատենախոսը օգտագործում է տվյալների փաթեթային /DEA/ վերլուծություն, հիմնված 16 մուտքային և 3 ելքային ցուցանիշների համակարգի վրա, որը լրացվում է գործոնային վերլուծությամբ և ռեգրեսիոն մոդելավորմամբ որպես չափման գործիք: Այս մոտեցմամբ գնահատվում է ինստիտուցիոնալ ռեսուրսները նորարարական արդյունքների վերածելու արդյունավետությունը՝ իրականացնելով բացահայտված կապերի տնտեսական մեկնաբանություն:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

1. Ատենախոսության առաջին գլխի տարբեր հատվածներում հեղինակը նշում է, որ գիտական հետազոտությունների և նորարարությունների շուկաների կարգավորումը, դինամիկան որոշվում են նաև ոչ ֆորմալ մեխանիզմներով, մշակութային և սոցիալական նորմերով, սակայն դրանց տակ ինչ է հասկանում ատենախոսը, չի հստակեցվում և պարզ չէ, թե օրինակ ինչ սոցիալական նորմերով կամ ոչ ֆորմալ մեխանիզմներով են կարգավորվում գիտական հետազոտությունների և նորարարությունների շուկաները:
2. Ատենախոսը նշում է, որ ինստիտուցիոնալ միջավայրը սահմանափակումների և խթանների համակարգ է /էջ 10/, սակայն հետագա շարադրանքում, ի տարբերություն խթանների, սահմանափակումներին անդրադարձ չի կատարվում և դրանք աշխատանքում չեն հստակեցվում:
3. Ատենախոսության երկրորդ գլխում հեղինակի կատարած վերլուծությունները վերաբերում են հիմնականում մեկ տարեթվի՝ կամ 2021թ-ին, կամ 2022թ-ին: Դինամիկ վերլուծության բացակայությունը թույլ չի տվել ներկայացնել երևույթի զարգացման միտումները: Աշխատանքը կշահեր, եթե ատենախոսը արդրադառնար նաև գիտական հետազոտությունների և նորարարությունների արդյունքների արտահանման ցուցանիշների վերլուծությանը և հնարավորություններին:
4. Ատենախոսությունում ներկայացված առանձին թվական թվյալների, աղյուսակներում ընգրկված թվական տվյալների, գծանկարների հղումները բացակայում են /էջեր 70-75/: Իսկ աղյուսակ 2.2-ում /էջ 78/, ներկայացված են Ռուսաստանում նորամուծությունների զարգացման խոչընդոտները և դրանց ազդեցության չափերը, սակայն տեքստում որևէ հղում, բացատրություն չկա, թե ինչպես են ստացվել այդ թվերը, արդյոք հեղինակն է դրանք հաշվարկել, թե որևէ աղբյուրից վերցրել է:
5. Ատենախոսը ներկայացրել է ՌԴ տարածքների/ռեգիոնների դասակարգում ըստ տեխնոլոգիական պոտենցիալի և ֆինանսավորման, սակայն բերված թվական տվյալների, օրինակ ինովացիոն ակտիվության մակարդակների,

հղումները բացակայում են և հեղինակը չի հստակեցնում, թե ինքը դրանք որևէ աղբյուրից է վերցրել, թե հաշվարկել է:

6. Աշխատանքի մեծածավալի տվյալների բազայում, ինչպես նաև վերլուծական մասում բավարար չափով ներկայացված չէ գիտական հետազոտությունների և նորարարությունների շուկաների զարգացման կարևոր ուղղություններից մեկի՝ մասնավոր հատվածի դերը, ինչը կնվազեցնի գնահատման արդյունավետությունը:
7. Ատենախոսության 2.3 և 3.1 ենթահարցերում նկարագրված մոդելավորման մեջ պարզ չէ հավելվածներում ներկայացված տվյալների և տեղեկատվության կիրառելիության աստիճանը: Մոդելավորման և դրա համար անհրաժեշտ հղումների միջև կապը բավականին թույլ է:

Եզրակացություն

Ատենախոսության վերաբերյալ արված դիտողությունները չեն նվազեցնում դրա գիտական արժեքը և ստացված արդյունքների կարևորությունը:

Սեբբագգալա Տոննի Մայամբալայի «Ռուսաստանի դաշնությունում գիտական հետազոտությունների և նորարարությունների շուկաների զարգացման ինստիտուցիոնալ միջավայրի գնահատում» թեմայով ատենախոսությունն ինքնուրույն, գիտական արժեք ունեցող և ամփոփ հետազոտություն է, եզրակացությունն ու առաջարկությունները տրամաբանական են, ստացված արդյունքները կարող են նպաստել գիտական հետազոտությունների և նորարարությունների շուկաների զարգացման ինստիտուցիոնալ միջավայրի ձևավորման և զարգացման հիմնախնդիրների լուծմանը:

Կատարված հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են 21 գիտական հոդվածներում:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է հետազոտության բովանդակությանը, արտացոլում է աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Սերբազգալա Տոնի Մայամբալայի «Ռուսաստանի դաշնությունում գիտական հետազոտությունների և նորարարությունների շուկաների զարգացման ինստիտուցիոնալ միջավայրի գնահատում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ, 7-րդ կետերի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.02-«Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՀՊՏՀ Կիրառական տնտեսագիտության ամբիոնի վարիչ,
տ.գ.դ., պրոֆեսոր՝ Թ.Մ.Մկրտչյան

ՀՊՏՀ Կիրառական տնտեսագիտության ամբիոնի դոցենտ,

տ.գ.թ.՝ Ս.Վ.Խաչիկյան

ՀՊՏՀ Կիրառական տնտեսագիտության ամբիոնի դոցենտ,

տ.գ.թ.՝ Ք.Ջ.Վարդանյան

ՀՊՏՀ Կիրառական տնտեսագիտության ամբիոնի դոցենտ,

տ.գ.թ.՝ Կ.Հ.Գրիգորյան

Թ.Մ.Մկրտչյանի, Ս.Վ.Խաչիկյանի, Ք.Ջ.Վարդանյանի, Կ.Հ.Գրիգորյանի ստորագրությունները հաստատում եմ՝

ՀՊՏՀ գիտական քարտուղար՝ Ե.Հ.Դարբինյան

12.05.20